1892 ՕԳՈՍՏՈՍԻ 30 (Սեպ. 11), ԿԻՐԱԿԻ

№ 101 — ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ — № 101

ԿԻՐԱԿԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30 (Սեպ. 11) 1892

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն [illegible]

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Սեպտեմբերի 1-ից «Արձագանք»-ին բաժանորդագրվողները պէտք է վճարեն չորս ռուբլի: Կարելի է բաժանորդագրվել խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային մատենադարանի խնդիրը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: — Ռափայէլ Պատկանեանի հոգեհանգիստը: Նամակ Նոր-Նախիջևանից: Երզրումից: Խօլերան Երևանում: Ամերիկա գաղթելու տենդը նաև Կիլիկիայում: Ս. Էջմիածնից: Զհ. ար գիւղից: Դուշէթից: Արժանապ. Փիտ քահանայ Եզանեանցի տեղափոխութիւնը: Դիլիջանից: Արժ. Սահակ Ք. Սահակեանի «Նոր Ուխտի Նիւթի մշակութեան» երկրորդ մասը: «Մշակի» աշխատակիցները: Ցուցակ Թիֆլ. տեղափոխուած քահանաների: Նամակ Երևանից: Նամակ Սարիղամիշից: Նամակ Նոր-Բայազէդից: «Մշակի» Ներբողը պ. Աղայեանին: Ներսիսեան դպր. սաները: Պաշտօնական տեղեկութիւններ խօլերայի մասին:

ՖԷԼԻԵՏՕՆ: — Քրիստափոր Կոլոմբոս: Դասագրքեր յօրինողներու միութեան կարևորութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: — Ուլիամ Գլադստոն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

ԶԱՆԱԶԱՆ:

ՏԵՂԵԿԱՏՈՒ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Եթէ թերթենք վերջին քսան կամ երեսուն տարիների հայ պարբերական հրատարակութիւնները՝ մի շատ հետաքրքիր տեսարան կբացուի մեր առջև.—Հրապարակախօսի մէկը, գիւցուք երեսուն տարի առաջ, իւր թերթում արել է մի օգտակար առաջարկ. այդ առաջարկութիւնը իրականութիւն չէ ստացել. սակայն քանի մի տարի անց նորից հանդէս է եկել մի ուրիշ թերթում և՛ աւելի եռանդուն յօդուածների ու բանակռուի առիթ տուել. սակայն դարձեալ մոռացութեան է տրվում. և այսպէս միևնոյն խնդիրը 20 — 30 տարուան ընթացքում տասն քսան անգամ երևան գալով՝ ամեն անգամ մնում է ձայն բարբառոյ. . .

Այսպիսի օրինակներ մեր լրագրութեան մէջ շատ շատ ունինք: Միայն մի թերթ 6 ամսուան ընթացքում իմ հաշուով 56 առաջարկութիւններ էր արած, սակայն և ոչ մինը նոցանից իւր լուծումը չէր գտել:

Առանց սխալուած լինելու՝ կարող ենք պնդել, որ կենդրոնական մատենադարան հիմնելու խնդիրն այդպիսի առաջարկութիւններից մէկն է եղած միշտ, որի մասին միշտ խօսուել է ու խօսուել և միշտ էլ. . . մոռացութեան յանձնուել:

Բայց չէ՞ որ քանի գնում գրագէտների ու գրականութեամբ պարապողների թիւն աւելանում է, հետևաբար և օր աւուր աւելի է զգացվում մի այնպիսի մատենադարանի կարևորութիւնը, ուր հայ գրագէտը գտնէր իւր ուզած գիրքը:

«Ազգային մատենադարանի» խնդիրն այն կարևոր խնդիրներից մէկն է, որոնք միշտ հոգածութեան առարկայ են եղել թէ ռուսահայ և թէ տաճկահայ հասարակութեան: Հինգ տարի է արդէն, որ դա մտահոգութեան նիւթ է դարձած տաճկահայոց պաշտօնական մարմինների և Ազգային վարչութեան հերթական խնդիրների շարքումն է: Բայց ինչպէս այնտեղ, այսպէս նաև մեր մէջ դեռ ևս իւր ցանկալի լուծումը չի ստացել:

Ըստ մեր խորին համոզման կ'ենդրոնական մատենադարան պէտք լինի մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գրատունը և ամեն հայ հեղինակ ու աշխատասիրող բարոյապէս պարտաւորուած պէտք լինի իւր աշխատութիւններից մէկ-մէկ օրինակ նուիրել նրան: Այդ իւր կարգին:

Բայց այստեղ մեր խօսքը տեղական մատենադարանի մասին է: Թիֆլիզն այն կենդրոնն է, ուր նախ՝ ժողովուած են գրագէտների ընտիր ույժերը և երկրորդ՝ ընդհանուր ասպրն-ջականն է ամարային ամիսներին պարապ մնացած ուսուցչական պաշտակարգին, որոնցից բաղկացած է գրեթէ մեր գրագէտների խումբը: Ահա դրանց մասին է մեր խօսքը:

Հայ տպագրութիւնների թիւը այնքան մեծ է, որ մասնաւոր և ոչ մի անձ կարող չէ շտեմարանել իւր գրադարանում նրանց ամբողջ ժողովածուն: Եւ եթէ գտնուին իսկ այդպիսիք՝ հազուագիւտ մի դէպք է: Իսկ նա, որ պարապում է գրականութեամբ, միշտ կարիք է զգում ծանօթանալ հայ տպագրութեանց հետ, օգուտ քաղել նրանցից, բայց ո՞ւմ դիմէ. անշուշտ շատերի հետ ևս պատահած կլինի այն ցաւալի դէպքը, որին գրեթէ ամեն օր ենթակայ է մեզանից ամեն մէկը. մի որևէ գիրք ձեռք բերելու համար ստիպուած էք լինում հարկաւոր անձանց դռները բաղխել և... ձեռնունայն ելնել:

Այսօր չենք կարող գտնել մի այնպիսի հաստատութիւն, ուր ժողոված լինի գէթ հայ պարբերական հրատարակութեանց հարկաւորաւոր ժողովածուն: Երբ հայ պատմաբանը ցանկանայ գրել տասնևիններորդ դարու հայոց պատմութիւնը, ի՞նչ աղբիւրներից կարող է քաղել իւր տեղեկութիւնները. ո՞վ պէտք է մատակարարէ նրան մի դարու լրագրների մէկ-մէկ օրինակը. իսկ մինթէ կարելի է գրել այդ պատմութիւնն առանց հայ պարբերական հրատարակութեանց, որոնք պարունակում են իրանց մէջ օրուայ չարն ու բարին, հայոց կեանքի նկարագրութիւնը իւր լաւ ու վատ կողմերով...

Ժամանակ է վերջապէս լրջօրէն մտածել այս խնդրի մասին:

Ներսիսեան դպրոցը, որ ամենայարմար տեղն էր ընդհանուր մատենադարան ունենալու և ամեն միջոցներն ունի իրագործելու այդ, տակաւին չկարողացաւ մի նոր շէնք կառուցանել իւր համար, կամ իւր 70 ամեայ պատմութիւնը գրել, ուր մնաց մատենադարանը:

Բարեգործական Ընկերութիւնը դեռ մտածում է, խորհում է դրա մասին...

Մնում է մեզ մի բան. թող գործին հմուտ և ձեռնհաս անձինք ժողովուին և հիմնեն վանքի աւագ եկեղեցու գաւթում մի հաստատուն և կանոնաւոր մատենադարան, որ միևնոյն ժամանակ կարող է ծառայել և կիրակի օրերն այդ եկեղեցին յաճախող բազմութեանը իբրև ընթերցարան. իսկ այս ձեռնարկութեան համակիրներ յուսանք թէ պակաս չպիտի լինին մեր մէջ:

Լաւ է ուշ, քան երբէք:

Գիւտ քահ. Աղանեանց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

—

Ամսոյս 29-ին, շաբաթ օրը ժամը 12-ին, Վանքի Մայր եկեղեցում կատարուեցաւ հանգուցեալ Ռ. Պատկանեանի հոգեհանգիստը: Տխուր հանդէսին ներկայ էր հայ հասարակութեան առաջաւոր դասակարգը, աչքի էին ընկնում հայ գրականութեան մշակներից շատերը:

Հանդիսադիր էր թեմիս ժամանակաւոր կառավարիչ բարեշնորհ Համազասպ վարդապետը, որ հոգեհանգստեան սկզբումը դամբանական ճառ խօսեց: Հոգեհանգստեան վերջումը ուսուցիչ Ս. Մալխասեանցը կարդաց մի գրաւոր մատենախօսութիւն, որ երևի գրուած էր որևէ ամսագրի համար, որովհետև ամենևին դամբանականի նման չէր: Պարոն Մալխասեանը քննելով Ռ. Պատկանեանի գործունէութիւնը, ցոյց տուաւ որ նա մեծ բանաստեղծ էր, փիլիսոփայ ու հրապարակախօս, և ցաւ յայտնեց, որ չէ կարելի [illegible] Ռափայէլ Պատկանեանի բարոյական ներգործութիւնը [illegible] չափել: Ճառը համեմած էր ռուս գրող Դերժաւինի խօսքերով:

Երբ հոգեհանգիստն աւարտուեցաւ, բազմութիւնն սկսաւ կամաց-կամաց ցրուել, տխուր հանդիսականների միջից յառաջ անցաւ [illegible] քով մեր ալեզարդ բանաստեղծ Գէորգ Բարխուդարեանը և մեզ յանձնեց հետևեալ երկտողը, որ նա նուիրել է իւր հանգուցեալ ընկերոջն.

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

«Բազզրախօս սրինգը», կապուեց յաւիտեան
«Քու անուշ լեզուն», էլ չես խօսելու.
«Ներդաշնակ քնարդ», ափսոս հայութեան
Լռեց, աւա՛ղ մեզ, էլ չենք լսելու:

Ի՛նչ վսեմ մտքեր, ազնիւ ձգտումներ
Արծարծում էիր երգերով ազնուն.
Նոցա լոյսը յափշտակվում էր,
Թէ որ իւր կրծքում ունէր սիրտ զգայուն:

Ուսանողական զուարթ կաճառում,
Վարժատներում, ուրախ խրախճանում
Եւ Մէլքոնեանի շքեղ տաճարում
Միշտ քո երգերով էինք զուարճանում:

Սէր էիր երգում — սիրով բորբոքում
Թէ ծերին և թէ երիտասարդին.
Ամենքի սիրտը վշտով մորմոքում,
Երբ ողբդ նուիրում ազգի աղէտին:

Սիրելի եղար դու հայոց ազգին.
Ու էլ չկրես գլխիդ դափնէ պսակ,
Բայց քո յիշատակն անմահ, թանկագին
Աւանդ կթողնէ զաւակէ զաւակ...

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ:

* *

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, 26 օգոստ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

25-ին օգոստոսի, այսինքն Գամառ-Քաթիպայի թաղման միւս օրն ի միջի այլոց ես ստացայ երկու հեռագիրներ, մինը պ. Գիւլեանից, միւսը պ. Քալանթարից. առաջինը ուղարկելով ինձ 20 ռուբլի, խնդրում էր Ղարաքիլիսցիներու բերնից դնել պսակ պոէտի դագաղին, երկրորդը, ուղարկելով 30 ռուբլի, Դիլիջանցիներու բերնից խնդրում էր անել միևնոյնը: Պ. պ. Քալանթարի և Գիւլեանի դեղեցիկ խնդիրը անիրագործելի է. այդ 50 ռուբլին թող լինի հայ հասարակութեան առաջին լուման անմահ բանաստեղծի գերեզմանի վրայ մի շքեղ մահարձան կանգնեցնելու: Այսու խնդրում ենք հայ հասարակութեանը, ով կը ցանկայ այդ դիտաւորութիւնն իրագործելու, թող չխնայէ իւր լուման մեզ ղրկելու (Нахичевань на Дону, Григорію Чолхушьяну). Շաբաթը մի անգամ «Արձագանքի» և «Մշակի» էջերում կը տպուի նուիրողների ցուցակը: Այստեղ ծագում է հարց. արդեօք վերջնականապէս ո՞ւր պիտի հանգչի մարմինը ազգային երգիծաբանին *): Յայտնի է, որ ինքը հանգուցեալը կը ցանկար թաղուել Ս. Էջմիածին: Զանազան պատճառներով, որ առ այժմ աւելորդ կը համարեմ պարզել, մենք մինչև անգամ չյարուցինք այդ խնդիրը և թաղեցինք նրան Սուրբ Խաչի վանքը: Բայց որ էլ վերջնականապէս նա թաղուի, մահարձանը հարկաւոր է. և եթէ նրան տեղափոխեն Ս. Էջմիածին, այն ժամանակ հաւաքած փողը կը յանձնուի ըստ պատկանելոյն: Բայց իբրև հանգուցեալի փոքրաթիւ մտերիմներից մէկը ես համարձակվում եմ բացարձակ յայտնել իմ միտքը. իմ կարծիքս այն է, որ Գամառ-Քաթիպայի տեղը Սուրբ Խաչ վանքն է, ահա թէ ինչո՞ւ: Նախ՝ նա ծնուել է Նոր-Նախիջևան, երկրորդ՝ նա ծառայել է գլխաւորապէս այստեղ, թէ իբրև ուսուցիչ, թէ իբրև մտրակող Սիլլիկ և վկայասան Ալթամերկեան և վերջապէս նրա կոխքին է թաղուած Միքայէլ Նալբանդեանը: Այս զարմանալի և անբացատրելի երևոյթ է, որ ամենամեծ երկու բանաստեղծները ծնուել են Նոր-Նախիջևան և թաղուած են այստեղ: Հարկաւո՞ր է արդեօք այժմ այդ երկու ամենամեծ բանաստեղծներին բաժանել. ոչ. մենք յօժար ենք, եթէ հարկաւոր է, վեր-

*) Եթէ հանգուցեալ բանաստեղծին արդէն թաղուած է ս. Խաչ վանքում, այդ խնդիրն ինքն ըստ ինքեան փակուած է մնում, որովհետև հայոց եկեղեցու օրէնքներով թաղուած ննջեցեալի մարմինը խսպառ արգելվում է տեղափոխել մի ուրիշ տեղ. իսկ եթէ նրա մարմինը լոկ իբրև աւանդ է յանձնուած հողին՝ այն ժամանակ այդ խնդիրը բնական ենք գտնում: Ծ. Խ.

ՖԵԼԻԵՏՕՆ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿՈԼՈՄԲՈՍ

—

Ամերիկայի յայտնագործութեան չորսհարիւր ամեակի առիթով:

(Պրոֆ. Մաուրէնբրեխերից)

Յուլիսի 24-ին Սպանիայում և Գենուայում մի շարք հանդէսներ տեղի ունեցան ի պատիւ համաշխարհային հանճարներից մէկի, որ չորսհարիւր տարի սրանից առաջ լի հաւատով յղացաւ այն միտքը՝ որ բացի հին աշխարհից այլ երկիրներ ևս գոյութիւն ունին. մի միտք, որ գրականապէս հերքվում էր այն ժամանակուայ գիտնականներից: Այդ անձը Սպանական նաւահանգստից երեք կիսականգուն փոքրիկ նաւերով դէպի անսահման ովկիանոսը նաւարկեց և հնադարեան աշխարհին ընծայեց երկրագնդի միւս կէսը: Դա Քրիստափոր Կոլոմբոսն էր:

Մարդկութեան համար Կոլոմբոսի գիւտը մեծ հետևանքներ ունեցաւ: Երկրագնդի իսկական ծաւալի որոշումը մտաւոր հորիզոնն ընդարձակեց: Ամերիկայի յայտնագործութիւնը մի այնպիսի անցք էր, որ նախ և առաջ խիստ զգալի կերպով մարդկութեան շահերը շօշափեց, իսկ դրա ազդեցութեան չափը քաղաքակրթութեան վրայ ընդհանրապէս տակաւին ներկայումս որոշուած է:

Այդ անցքը նրանով է զանազանվում այլ պատմական դէպքերից, որ այն անձը, որ համարձակուեց, կամ աւելի ճիշդն ասած, յանդգնեց այդպիսի մի հրաշք կատարել, երկար ժամանակ առասպելական կիսախաւարով քօղարկուած մնաց և ժողովրդի երևակայութեան մէջ Քրիստափոր Կոլոմբոսը ներկայացաւ իբրև մի հերոս, ամբիծ և անբերկիւղ ասպետ բոլոր մարդկային թերութիւններից ազատ, որոնք նոյն իսկ մեծ մարդկանց յատուկ են: Սակայն պատմական հետազօտութիւններն ապացուցեցին, որ Կոլոմբոսը ևս իւր թերութիւններն ու թոյլ կողմերն է ունեցել, թէև ստուգուեցաւ և այն, որ նա յանուն ճշմարտութեան ահագին չարչարանքներ և նեղութիւններ է կրած, և այն փայլուն պսակը, որ նրան է ընծայուած, շատ թանգ արժէքով է ձեռք բերուած:

Նորա կենսագրողները միշտ տարակուսութեան մէջ են, թէ ինչ բանի վրայ աւելի դարմանան՝ Կոլոմբոսի հանճարի վրայ, թէ բնաւորութեան վրայ, որ երկաթեայ կամքից և եռանդից էր հիւսուած:

Քրիստափոր Կոլոմբոսը 1446, կամ 1447 թուականին է ծնուած Գենուայի մօտ և բրդավաճառ Դոմինիկ Կոլոմբոյի և նրա կնոջ Սիւզան Ֆոնտարոսսու որդին է: Որդու ծնունդից քիչ յետոյ, նրա հայրը Գենուա տեղափոխուեց և նիւթապէս անապահով վիճակ ստացաւ. սակայն ժամանակի ընթացքում դրամական միջոցները սուղացան այնպէս, որ օրուան հացը հայթայթելու համար ստիպուեցաւ սպանդօղ բանալ: Քրիստափորը ամենատարրական կրթութիւն է ստացել: Նախ բրդավաճառի մօտ գործակատար էր նա, իսկ յետոյ նաւաստի դարձաւ և մի քանի ծովային ճանապարհորդութիւններ կատարեց, որոնց մանրամասնութիւնները յայտնի չեն, երևի այն պատճառով, որ դրանք աւելի առևտրական կամ աւազակային կերպարանք էին կրում:

Երբ և որտեղ նա ընտելացաւ ովկիանոսից դէպի արևմուտք ճանապարհորդելու մտքին, յայտնի չէ, միայն այսքանը պարզ է, որ ժամանակակից քարտէզները ուշադրութեամբ երկար ուսումնասիրելուց յետոյ, հասաւ նա այն եզրակացութեան, որ անսահման ովկեանոսի մէջ պիտի նոր երկիրներ լինին և եթէ ուղղևորուելու լինինք դէպի արևմուտք, Ասիայի արևելեան ափին պիտի հասնենք: Այդ գաղափարը նոր չէր. ապացուցուած է որ Ֆլորենտացի յայտնի աստղագէտ բժիշկ Տօսկանելլին միևնոյն էր քարոզում: Կոլոմբոսը Տօսկանելլուն նամակ գրեց և մեծ հաւանութիւն և խրախոյս ստացաւ նրանից:

Արդէն 18 տարի էր անցել այդ միտքը յղանալուց, և սակայն Կոլոմբոսը իւր փայփայած նպատակի գէթ տասներորդ մասը չէր իրագործել: Փորթուգալիայում մերժել էին նախ այն պատճառով, որ օտարականին ընդունակ չէին համարում այդ տեսակ հերոսութեան համար և երկրորդ Կոլոմբոսի պայմանները վիրաւորական էին գտել Փորթուգալիայի թագի համար, քանի որ նա իւր ներկայացրած խնդրում պահանջում էր, որ ՛ի դէպս յաջողութեան նոր երկիրների կուսակալ ինքը նշանակուի և արդիւնքի մի տասներորդ մասն իրան յատկացուի:

Երբ Կոլոմբոսի առաջարկութիւնը մերժուեցաւ, նա գաղտնի հեռացաւ Լիսաբոնից, թողնելով այնտեղ իւր կնոջը, որ յայտնի չէ թէ ե՞րբ և ո՞ւր վախճանուեցաւ:

Բազմաթիւ ապարդիւն դիմումներից յետոյ, որով Կոլոմբոսը թէ դրամ և թէ նաւեր էր որոնում իւր լայն ծրագիրն իրագործելու համար. վերջապէս նա սպանական պալատին դիմեց: Սկզբում նրան կասկածով վերաբերուեցին: Պալատի յետևից նա Սալամանկ ուղևորուեցաւ. այնտեղ նրան յաջողուեց Սպանիայի կարդինալ և Տօլէդօյի արքեպիսկոպոս Պեդրօ Գօնզալէսի համակրութիւնը ձեռք բերել, թէև Կոլոմբոսի մտքերը նրան հերետիքական և Սուրբ Գրքին հակառակ թուացին, բայց խելացի քահանայապետը մեծ ուշադրութեամբ լսեց հանճարաւոր իտալացուն և նրա ազնիւ ոգևորութիւնից և համոզմունքների յամառութիւնից աննկատելի կերպով այնպէս վարակուեց, որ արքայի մօտ ընդունել տուեց նրան: Կոլոմբոսը համեստօրէն ներկայացաւ մեծազօր արքային և իւր ծրագիրը անյաղթելի ոգևորութեամբ և եռանդով բացատրեց:

Ֆերդինանդը չկամեցաւ սոսկ իւր կարծիքին հաւատ ընծայել և տնօրինեց յայտնի աշխարհագէտներից, իմաստասէրներից և գիտնականներից ժողով կազմել Կոլոմբոսի առաջարկը քննելու:

1486 թուականին Սալամանկում Սպանիայի մտաւոր կենդրոնում, ս. Ստեփաննոսի Դոմենիկեան վանքում, գիտնական ժողովը կայացաւ, ուր պիտի վճռուէր թէ ներկայացողը մի թափառական խելագար է, թէ ականաւոր ծովագնաց:

Գենուայի անյայտ նաւաստին ներկայացաւ ժողովին, ուր կային մաթեմատիկոսներ, աստղագէտներ, աշխարհագէտներ յայտնի պրոֆեսօրներ, որոնք սկզբունքով Կոլոմբոսի դէմ նախապաշարուած էին:

Գիտնականների մեծամասնութիւնը նրանից սկսեց՝ թէ ահա քանի դար է փիլիսոփաները և ծովագնացները հետազօտել են աշխարհը և ոչ ոք այդպիսի եզրակացութեան հասած չէ, հետևապէս աներևակայելի յանդգնութիւն է անյայտ պարոնի

ցրրէք երկուսին էլ Ս. Էջմիածին, բայց մինին միւսից չեն բաժնէք:

Բայց հէնց հասարակութեան վրայ կայ մի մեծ պարտք—ապահովացնել Ռափայէլ Պատկանեանի գերդաստանը: Հայերը չպէտք է խնայէն իրանց կոպէկները. այստեղ հաւաքուեց արդէն 1000 ռուբլի. միթէ դժուար է մեր մեծատուն ազգայիններին օգնել ազգի մշակի չքաւոր զաւակներին:

Վերջացնելով նամակս յայտնում եմ, որ ժամանակին ես առաջարկել էի քանդակագործ Kowalewski-ին հանել Գամառ-Քաթիպայի երեսը, այնպէս որ 5—6 շաբաթից յետոյ պատրաստ կը լինին հանդուցեալի բիւստերը. ով կը ցանկայ ունենալ այդ բիւստից, թող բարեհաճէ կանխաւ դիմելու ինձ:

Գր. Չալխուշեան

* *

ԷՐԶՐՈՒՄԻՑ մեզ գրում են, որ այս տարի Սանասարեան վարժարանում աւարտեցին իրանց ուսումը 23 հոգի: Այսպիսով անցեալ և այս տարուայ ուսումնաւարտների թիւը հասնում է 43-ի: Ջրջանաւարտ 43 հոգու մեծ մասը գնացել են իրանց հայրենիք՝ ուսուցչութեամբ պարապելու նպատակով, միւս մասն իրանց ծնողաց մօտ առևտրական գործերով են զբաղուած, քանի մի հոգի մնացել են վարժարանի մէջ փորձնական դասատուութեամբ վարժուելու համար, իսկ մի քանիսին էլ դպրոցի խնամակալութիւնն ուղարկել է արտասահման գիտութեանց և արուեստից մէջ կատարելագործուելու համար, համաձայն լուսահոգի հիմնադրի կտակին:

— Սանասարեան վարժարանը անցեալ 1890—1891 ճեմարանական թուականին ծախք է ունեցել 3700 օսմանեան լիրայ, որոնք գոյացել են հետևեալ մուտքերից՝ լուսահոգի հիմնադրի կտակած գումարների տոկոսիքներից 1500 լիրայ, 85 աշակերտներից 1700 լիրայ, երաժշտութեան վարձ—120 լիրայ, արհեստանոցից—120 լիրայ, կալուածքից—150 լիրայ, ախոռից—80 լիրայ և այլ և այլք—30 լիրայ,—ընդամենը 3700 օսմանեան լիրայ:

* *

Ինչպէս յայտնի է «Արձագանքի» մէջ տպուած պաշտօնական տեղեկութիւններից, խօլերան առանձնապէս տարածուեց և մեծ կոտորածներ պատճառեց Անդրկովկասի նահանգներից՝ Դաղստանի, Գանձակի, Երևանի, այլ և մասամբ Կարսի նահանգներում: Վերջին շաբաթներումս ախտը շատ պակասել է և մինչև անգամ շատ տեղերում դադարել է: Այսպէս օր. վերջին պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ օգոստոսի 22-ին Երևան քաղաքում հիւանդացել են 2, մեռել է 1, առողջացել են 8, իսկ ամբողջ Երևանեան նահանգում հիւանդացել են 135, մեռել են 75 և առողջացել են 88 հոգի: Իսկ 23-ին ամբողջ նահանգում հիւանդացել են 9, մեռել են 3 և առողջացել է 1. ախտը դադարում է նոյնպէս Կարսի նահանգում, որտեղ 10—15 օր առաջ մեծամեծ զոհեր էր տանում:

«Մշակ» լրագրին Վաղարշապատից գրում են.

«Օգոստոսի 24-ին կաթողիկոսական տեղակալ, սրբազան Երեմիայի առաջարկութեամբ՝ Արիստակէս Սեդրակեան եպիսկոպոսը, իր հետ առնելով նաև Գէորգ սարկաւագ Մուրատեանցին, ուղևորվեց Երևանեան նահանգի այն գիւղերը, որտեղ տիրում է խօլերան, որպէս զի սկզբնական միջոցներ ձեռք առնէ խօլերայի դէմ: Սրբազանը տանում է իւր հետ դրամ և դեղեր՝ չքաւորներին և աղքատներին ապրուստի միջոց մատակարարելու, իսկ հիւանդներին՝ դեղեր»: Համակրելի և գովելի է տէր տեղակալի արած կարգադրութիւնը և օրինակելի է սրբազան Սեդրակեանի յանձն առած գործը: Մխիթարական է, շատ մխիթարական այդ երկու համակրելի բարձր հոգևորականների վարմունքը: Դրանով այդ երկու համակրելի անձինք աւելի էլ մեծ ժողովրդականութիւն կը վաստակեն ժողովրդի մէջ: Մի բանի վրա միայն զարմանում ենք. այդ այն է, որ սրբազանը իր հետ բժիշկ չէ վերցրել: Հարկաւոր էր բժիշկ հետն ունենալ, որը կարողանար նախ ցոյց տալ դեղերի գործածութիւնը և ապա հարկաւոր դէպքում օգնութիւն հասցնել և իրան սրբազանին: Միթէ կարելի է պտտել վարակված տեղեր առանց բժշկի, առանց դէզինֆէկտօրի: Միթէ չը մտածեցին, որ չէ կարելի ուղարկել սրբազանին մենակ, մի սարկաւագի հետ, առանց բժշկի: *)

*) Բնական է թէ ինչու Սրբազան Սեդրակեանը բժիշկ չէ վերցրել իւր հետ, քանի որ ճարակումն այնպէս այնքան սպառնալի չէ:

Ն. Խ.

* *

Արտասահմանի մի հայ թերթի մէջ կարդում ենք հետևեալը.

«Ամերիկա պանդխտելու տենդը, որ համաճարակի պէս Խարբերդէն տարածուեցաւ շրջակայ գաւառները Բալու, Ակն, Արաբկիր, Մալաթիա, Չմշկածագ և այլն, այժմ ճարակեր է նաև Կիլիկիայի մէջ: Ատանա, որ Թիւրքիայի ամենէն հարուստ, մշակուած գաւառներէ մէկն է, գործ փնտռողներ կը դիմէին ցարդ, ինքն ալ սկսեր է պանդուխտ դուրս տալ: Այս վերջին շաբաթներ եկող անցնող պանդուխտներին մէջ մեծ մաս մը կը կազմէին Ատանացիները, որոնց մի մասը աւելի դրամ շահելու կերթան երևակայական հաշիւներով. մի մասն ալ քաղաքական հալածանքէ կը փախչին: Միևնոյն ատեն Միացեալ-Նահանգներէն վերադարձող Արաբկիրցիներ ալ դժգոհ են իրենց պանդխտելուն համար և յուսահատ ետ կը դառնան»:

* *

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ գրում են «Նոր-Դար»-ին. «Սինոդի նորահաստատ անդամ Գևր. Ազատեան սրբազանը, որ տարուայ սկզբում նշանակուեցաւ ընդհանուր վերատեսուչ Վանքի բոլոր ներքին և արտաքին կալուածների, ծախսարարապետ և վերատեսուչ հին ծախքերի, որ երկու անգամ Թիֆլիզ ուղարկուեցաւ ձմեռը՝ յունուարի 6-ի աղէտը քննելու և մարտի 22-ի ընտրութեանը նախագահելու, որ իւր եռանդուն գործունէութեան համար հանգուցեալ հայրապետի 300 ռուբլու արժողութեամբ մուշտակին ընծայ ստացաւ մայիսի սկզբում,—այժմ զրկուեցաւ ընդհանուր տեսչութեան իրաւունքից, և հաստատ աղբիւրից գիտենք, որ պիտի արձակուի վանական կառավարութեան նախանդամի պաշտօնից: Սրբազանը դեռ սինոդի անդամ է»:

* *

ՁԽԱՐ գիւղից մի կարևոր թղթակցութիւն ստացանք՝ հանգուցեալ Սանասարեանից նոյն գիւղի հայ ուսումնարանին և եկեղեցուն կտակած գումարի և նոյն նպատակի համար ժողոված այլ գումարների գործածութեան վերաբերութեամբ, սակայն ցաւում ենք, որ չենք կարող հրատարակել, քանի որ թղթակցութիւնը չէ կրում ստորագրութիւն: Յոյս ունինք, որ Ձխարի հասարակութիւնն ինքը կըպարզէ այդ խնդիրը:

* *

ԴՈՒՇԷԹԻՑ մեզ գրում են.

Խօլերան այստեղ էլ մուտ գործեց: Վախճանուեց գաւառիս ակցիզնի գլխաւոր ատենաւոր Բուլաղաշը: Հանգուցեալը ամենքից սիրուած և յարգուած մի անձնաւորութիւն էր: Թուշուաներին շրջապատողներն ու գրագիրները բոլորն էլ երես դարձրել հեռացել էին նորանից: Քաղաքս սեպհական բժիշկ չունի, իսկ քաղաքային ֆելդշերին արգելում է զինուորական բժիշկը հիւանդներին այցելել… գաւառական բժիշկը ուրիշ տեղ է ուզում գնալ, բայց երկնչում է խօլերայից, իսկ զինուորական բժիշկը իւր գործն ունի:

Տեղոյս նորահաստատ հաշտարար դատաւոր պ. Եակուլեանցը տէր ու տիրական է դառնում ամենից յոյսները կտրած հիւանդների ընտանեաց: Հասարակութիւնը զարմանում է, որ պ. Եակուլեանցը որպէս ընտանեաց տէր մարդ՝ ցոյց է տալիս աննման անձնազոհութիւն:

Այն որ ուրիշի գործն է, անում է Եակուլեանցը, մինչ սրանից մեծ անձնուիրութիւն, երբ ննջեցեալին ինքն է դագաղ իջեցնում, երբ ուշաթափ կնոջ մահճակալը վեր քաշելով մի այլ տուն է փոխադրում: Ահա են սանիտարական խմբի անդամները:

Քաղաքիս հասարակութիւնը երախտապարտ պիտի մնայ մարդասէր դատաւոր պ. Եակուլեանցին:

Քաղաքումս տարածուած է լուծը, թէ հասակաւորների և թէ մանկահասակների մէջ, իսկ կարմրուկն ու քութէշը երեխաների մէջ:

Մեր մեծ և անզուգական բանաստեղծի մահը այստեղի գնահատողների շրջանում մեծ ցաւ պատճառեց:

* *

Անցեալները մի ուրախալի լուր հաղորդեցինք մեր թերթում, որ մեր երիտասարդ քահանայ Տէր-Գիւտ Աղանեանի նորագոյն կարևոր երկասիրութիւնն արժանացել է Կ. Պօլսում Սահակ-Մեսրոպեան մրցանակին:

Արժ. Աղանեանը մեր գրականութեան մէջ նոր հանդէս եկողներից չէ, նա վաղուց յայտնի է իբրև թարգմանիչ, հրատարակիչ և գրչագէտ:

Հանգուցեալ Մակար Ա. կաթուղիկոսը պարգևատրել է նրան լանջական խաչով «գրական աշխատութեանց» համար:

Հայր Գիւտ Աղանեանցն այն պարտաճանաչ քահանաներիցն է, որոնք Մայր-Աթոռի շահը միշտ աչքի առաջ են ունեցել. Նրա յատուկ ջանքով իւր ծխականներից մէկը յօգուտ Ս. Էջմիածնի գանձարանին է կտակել իւր 20,000 արժողութեամբ կալուածքը:

Հայր Աղանեանցը երկար տարիներ ձրի ուսուցչութիւն է արել ս. Մինասի, ս. Մարիամեան և այլ ուսումնարաններում և իբրև քահանայ բազմաթիւ անվարձ ծառայութիւններ է մատուցել հոգևոր իշխանութեան, որպէս բարեկարգիչ, Սրբազան Սեդրակեանի առաջնորդութեան օրերում, որպէս քննիչ Թիֆլիզում և գաւառներում ամենակնճռոտ դէպքերում:

Ժողովրդականաց ընտրութեամբ և հանգուցեալ հայրապետի կոնդակով վեց տարի շարունակ հոգաբարձութեան նախագահի պաշտօն է վարել Կուկիոյ Աղայեանց դպրոցում:

Հայր Գիւտ Աղանեանցը մեր քահանայից մէջ այն հազուագիւտ անձինքներից մէկն է, որ ուսումնասիրել է մեր եկեղեցական ծիսակատարութիւնը և ունի յօրինած մեր եկեղեցու տոմարի ու տօնացուցի ուղեցոյցը:

Այս օրերս սինոդի հրամանով Հայր Գիւտ Աղանեանցը Վանքի Մայր եկեղեցուց, ուր հայրապետական հրամանով քահանայ էր կարգուած ցարդ, փոխադրվում է Կուկիոյ Սուրբ Աստուածածին եկեղեցին:

* *

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեր թղթակիցը հեռագրում է, որ այնտեղ ամսոյս 27-ին բոլոր հայ հասարակութեան ներկայացութեամբ և հանդիսով կատարուել է հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանի հոգեհանգիստը:

* *

Այս օրերս մամուլին կը յանձնուի արժ. Սահակ քահ. Սահակեանցի աշխատասիրած «Նոր Ուխտի նիւթի մշակութեան» երկրորդ մասը (ուսուցչաց համար), որ արդէն թոյլատրուած է Ս. Էջմիածնի սինոդից:

* *

«Արձագանքի» շնորհիւ «Մշակ» լրագրի աշխատակիցների թիւը օր ըստ օրէ աւելանում է. պ. Մելիք-Ադամեանի գաղափարները հանգիստ չեն տալիս պարոն Ա. Ստեփանեանցին, նա էլ մի նամակով զարդարել է «Մշակի» էջերը: Պարոն Ստեփանեանցը պաշտօնով լումայափոխ լինելով և գործով եկեղեցական ընտրող, ցանկանում է Ս. Էջմիածնի հաշուապահ լինել, խնդրագիրը ճիշդ հասցէով է գրուած, յուսով ենք որ նա շուտով այդ պաշտօնին կ'արժանանայ:

* *

Թիֆլիզի հայ եկեղեցիները ներկայումս ունին 54 քահանայ, որոնցից 33-ը պաշտօն են վարում այն եկեղեցիներում, որոնց վրայ ձեռնադրուած են նրանք, իսկ 21-ը տեղափոխուած են մի մասը գաւառներից, իսկ միւս մասը մէկ եկեղեցուց միւսը:

Աչքի առաջ ունենալով, որ սինոդը քահանայից տեղափոխութիւն է ձեռնարկել այն սկզբունքով, որ իւրաքանչիւր քահանայ այն եկեղեցում պիտի պաշտօն կատարէ, որի վրայ ձեռնադրուած է, կարծում ենք, որ հետևեալ ցուցակում նշանակուած բոլոր քահանայք պիտի տեղափոխութեան ենթարկուին.

1) Վանքի աւագ եկեղեցու՝ աւագ քահանայ Ղևոնդ Խարադեանցը փոխադրուած է Ջրկինենց եկեղեցուց:

2) Նոյն տեղի Եղիշէ քահ. Տէր-Գրիգորեանցը՝ Կուկիոյ Թանդոյեանց եկեղեցուց:

3) Նոյն տեղի Գիւտ քահ. Աղանեանցը՝ Կուկիոյ Նորաշէն եկեղեցուց:

4) Քամոյենց եկեղեցու Տէր Յովհաննէս Մարտիրոսեանցը՝ Շուլաւէր գիւղից:

5) Մուղնու՝ Սիմէօն ք. Չմշկեանցը՝ Ալէքսանդրապօլից:

6) Նոյն տեղի Մուշեղ ք. Տէր-Ղևոնդեանցը՝ Քամոյենց եկեղեցուց:

7) Նորաշէնի աւագ ք. Գէորգ Տէր-Տէրեանցը՝ Դուշէթից:

8) Նոյն տեղի Դաւիթ ք. Տիրգրիգեանցը՝ Թէլաւի Ուլյաթուրան գիւղից:

9) Կաթուղիկէի Գէորգ ք. Գնունին՝ Փոթից:

10) Նոյն տեղի Ստեփաննոս ք. Սամուէլեանցը՝ Կերճ քաղաքից:

11) Նոյն տեղի Մարտիրոս ք. Ամիրխանեանցը՝ Գօրուայ Խելթուբան գիւղից:

12) Հրեշտակապետաց եկեղեցու Տէր Անտոնը՝ Խոշանիից:

13) Քարափի ս. Գէորգի Տէր Յովհաննէս՝ Մեծ Թոնէթ գիւղից:

14) Թանդոյենց եկեղեցու Եսայի ք. Տէր-Նիկողոսեանցը՝ Աճալա գիւղից:

15) Կուկիոյ Նորաշէն եկեղ. Խաչատուր ա. քահ. Տէր-Խաչատուրեանցը՝ Լոռու Ճոճկան գիւղից:

16) Նոյն եկեղեցու Ղևոնդ քահ. Աստուածատուրեանցը՝ Քամոյենց եկեղեցուց:

17) Զուգուրեթու Յարութիւն ք. Տէր-Զաքարեանցը՝ Կուկիոյ Նորաշէն եկեղեցուց:

18) Ս. Մինասի Սարգիս ք. Իգիթեանցը՝ Դուռնուկ գիւղից:

19) Զօրաբաշի Յովհաննէս ք. Տէր Մխիթարեանցը՝ Սղնախի Անագ գիւղից:

20) Նոյն տեղի Գրիգոր ք. Մանդակունին՝ Վելիսցիխէ գիւղից:

21) Ջրկինենց եկ. Սիմէօն ք. Աբրահամեանցը՝ Բորժոմ գտնուող զօրքի համար է ձեռնադրուած:

* *

ԵՐԵՒԱՆ, 24 օգոստ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Դեռ ևս խօլերան Երևանում չսկսած, տեղացի բժիշկները պ. պ. Վարդանեան, Յովհաննիսեան և այլք 'ի նկատի ունենալով հրէշաւոր թշնամու—խօլերայի սպառնացող վտանգը, առաջարկեցին քաղաքային վարչութեան իրանց ծառայութիւնը, նախապատրաստական միջոցներ ձեռնարկելու համար քաղաքը «զա» կացուցանելու սպառնացող վտանգից, որոշելով իրանց վարձ խօլերան չսկսած 100 ռ., իսկ սկսելուց յետոյ 200 ռուբլի ամսական: Քաղաքային վարչութիւնը մերժեց բժիշկների առաջարկութիւնը, և ահա այդ բժիշկները հրաւիրուեցան Բագու: Իսկ այժմ երբ համաճարակը Երևանում զգալի կերպով նուազում է, նոյն վարչութիւնը բժիշկներին հեռագրով հրաւիրում է 300 ռուբլիով:

Մենք ակամայ յիշում ենք պարսկական այն առածը, թէ «Հայը չի տայ ինը, քօթակը ուտելուց յետ կըտայ երեսունը»:

Թէ այսպէս և թէ այնպէս, լաւ է ուշ սկսել գործունէութիւն, քան թէ երբէք չսկսել… Այսօր քաղաքը ունի երեք բը-

---

կողմից այդ տեսակ նշանաւոր գլուխ անելու յաւակնութիւնը: Ի միջի այլոց ասում էին՝ թէ Սուրբ Պետրոս առաքեալը իւր թղթում ուղղած առ հրէաները, երկիրը վրանի հետ է համեմատում, հետևապէս գետինը պիտի տափարակ լինի և ոչ բոլորաձև: Կոլոմբոսը նկատեց, որ իւր առաջարկութիւնը փոխանակ աշխարհագրական՝ կրօնական տեսակէտից է քննվում և նոր աշխարհ գտնելու խնդիրը կրօնական վէճի է փոխվում:

Սակայն Կոլոմբոսը մաքառում էր և չէր յուսահատվում: Այդ միջոցին արքայական զոյգը թողնելով Սալամանկը, զօրքի հետ միասին Մալագա ուղևորուեցան և սկսուեց պատերազմը Մաւրիտանցիների դէմ: Կոլոմբոսը թէև նրանց հետևեց, սակայն նրա վրայ ուշադրութիւն դարձնող չեղաւ: Պատուասէր սպանացիներին միայն պատերազմն էր հետաքրքրում: Կոլոմբոսը համբերում և սպասում էր: Նրան ծաղրում էին, խելագարի տեղ էին ընդունում, նոյն իսկ փողոցի երեխաները յետ'ևից բղավում էին: Կոլոմբոսը իւր արժանապատուութիւնը ճանաչելով՝ դատ պահանջեց: Սալամանկում կրկին ժողով կայացաւ, ուր և գործը վճռուեցաւ:

Ամբողջ ծրագիրը տխմար երևակայութեան արտադրութիւն և մեծ արքաներին անվայել գործ հռչակուեցաւ, իսկ Կոլոմբոսը՝ թափառաշրջիկ, բաղդախնդիր համարուեցաւ:

Հպարտ Գենովացու համար շատ վիրաւորական և ծանր էր լսել՝ որ իւր առաջարկութիւնը ցնորք է: Արքան և կինը կամենալով մեղմացնել այդ պատասխանի ծանր տպաւորութիւնը, խօսք տուին պատերազմը վերջանալուց յետոյ աւելի մանրամասն քննել նորա ծրագիրը և օգնել նրան, իսկ առայժմս հրաժարուեցան նոր նոր ծախքեր անելու, դրամական միջոց չունենալու պատճառով:

Սակայն Ֆրանցիսկեան հին աւերակ Լա-Ռաբիդա վանքին վիճակուած էր Կոլոմբոսի առաջարկը խորտակումից փրկել: Այդ վանքը գտնվում է Անդալուզիայում Պալօս ծովեզերեայ քաղաքի մօտ: Ներկայ հանդէսների մէջ, ինչպէս նաև Ամերիկայի առաջիկայ ցուցահանդէսում վանքին պատուաւոր և փառաւոր տեղ է յատկացրած հէնց այդ պատճառով:

Մի անգամ վանքի դռնապանատան առաջ մի ուխտաւոր կանգնեց, շատ աղքատ ցնցոտիներով և մի կտոր հաց և մի բաժակ ջուր խնդրեց փոքրիկ մանուկի համար, որ նրան ուղեկցում էր: Վանահայրը—Պերէս վարդապետը, որ այդ միջոցին անցնում էր, զարմացած և հիացած նայում էր օտարականի դէմքին, որ բնածին վեհութիւնը և աղքատ զգեստը ներդաշնակութեան մէջ էին: Ուխտաւորը Կոլոմբոսն էր, իսկ երեխան նրա որդի Դիէգօն: Արքայից մաշուած, ամենքից ծաղրուած, գիտնականներից մերժուած, նա այնուամենայնիւ իւր եռանդը չէր կորցրել և մեծ գաղափարի համար էր մաքառում: Յոյսը ձեռքին և սոված նա զուր տեղը Դիոգինէսի նման լապտերը ձեռին օգնութիւն էր հայցում, որ մարդկութեան նոր աշխարհը ընծայէ և այժմս Գաղղիա էր ուղևորվում յուսալով այնտեղ օգնութիւն ստանալ:

Վանահայրը Կոլոմբոսին պահեց և ստիպեց նրան տեսակցել Պալօս քաղաքի խելացի բայց անյայտ բըժիշկ Հօրցիա Ֆերնանդէսի հետ: Ծովեզերեայ քաղաքի նաւաստիները ևս մասնակցեցին այդ ժողովին: Իրաւ է Սալամանկի ժողովի կերպարանքը չէր կրում այդ ժողովը, չկային այնտեղ գիտնական պրոֆեսորներ, բացի մի քանի նաւաստիներից, մի բժշկից և մի խեղճ կրօնաւորից, սակայն Կոլոմբոսին արժանաւոր ուշադրութեամբ լսեցին և վճռեցին անմիջապէս ամենահմուտ ծովագնացներից մի պատգամաւոր ուղարկել թագուհի Իզաբելլայի մօտ, յանձնելով նրան վանահօր նամակը: Պատգամաւորը վերադարձաւ պատասխան բերելով, որ թագուհին պահանջում է վանահօրը: Բարի կրօնաւորը խրախուսուած շրջապատողների ոգևորութիւնից, անմիջապէս ուղևորուեց թագուհու մօտ և այնպիսի ոգևորութեամբ պատկերացրեց ծրագրի վեհութիւնը և նրանից սպասելիքը Սպանիայի համար, որ թագուհին հազար դուկատ ուղարկեց Կոլոմբոսին, որ նա կարողանայ վայելուչ կերպով ներկայանալ, հրաւիրեց նրան իւր պալատը:

Մաւրիտանական պատերազմն արդէն վերջացել էր և Ալհամբրա ամրոցի բանալիներն արդէն յանձնուած էին Սպանիական զոյգին: Ջէնքի ձայներից արբած զօրքը և ժողովուրդը զուարճանում էր և միայն մի մարդ կար, որ ամեն մի անկիւնում արքային շրջապատող գրանդներին նոր աշխարհ գտնելու ծրագիրն էր բացատրում:

Յաղթութեան ժամը մօտեցել էր, որովհետև բաժակը արդէն լցուած էր: Ֆերդինանդը և Իզաբելլան բանակցութիւնները նորոգեցին: Համոզուած լինելով որ յաջողութիւն է ունենալու, Կոլոմբոսը Սպանիային էլ միևնոյն պայմաններն առաջարկեց, ինչ որ Փօրթուգալիային, այն է որ նա ինքը լինելու է աւագ ծովապետ նաւատորմի և փոխարքայ ու կուսակալ նոր գտնելիք երկիրների, արդիւնքի 10-երրորդ մասը ևս իրան է պատկանելու: Ահա այստեղ սկսվում է մի զուարճալի կատակերգութիւն. Սպանիայի պալատը վաշխառուի նըման սակարկութիւն է անում Կոլոմբոսի հետ, առաջ է գալիս մի տեսակ ժլատութիւն, որ անհասկանալի պիտի թուայ. քանի որ նոր երկիրների գոյութիւնը նոյն իսկ հերքում էին: Կոլոմբոսի պահանջները չափազանց էին գտնում:

Ապրիլի 17-ին 1492 թուականի վերջապէս պայմանաթուղթն ստորագրուեցաւ, որով Սպանիական թագաւորը և թագուհին Քրիստափոր Կոլոմբոսին ճանաչեցին ովկեանոսի մեծ ծովապետ, նշանակեցին նրան կուսակալ և փոխարքայ նոր գտանելի երկիրների, որի արդիւնքի մի տասներորդ մասն ևս նրան էին յատկացնում և Կոլոմբոսի ժառանգներից աւագն ընդմիշտ պահպանում էր իւր պայմանները: Խրախուսուած և ոգևորուած Կոլոմբոսը Պալօս վերադարձաւ, կամենալով որ նաւատորմը այն հիւրաւէր անկիւնում կազմակերպուի, որտեղ նա միանգամ իբրև մուրացկան հասաւ: Շնորհիւ ծովագնաց Մարտէն Ալօնզօ Պինզօնի խումբը կազմակերպուեցաւ և օգոստոսի 3-ին 1492 թուին նաւատորմը որ բաղկացած էր երեք փոքրիկ առագաստաւոր նաւերից և 120 նաւաստիներից նաւահանգստից աղաղակներով և կեցցէներով դուրս եկաւ և ուղևորուեց դէպի Քանարեան կղզիները:

(Կը շարունակուի)

Աշ. Թ…

մինչև, մի բժշկական փոխուլտետ'ն ուսանող—Զաւրիեվ և մի քանի ֆելդշէրներ, որոնք եռանդով գործում են և շնորհիւ այդ գործունէութեան, համաճարակը իւր ույժերը կորցնում է հետզհետէ...

Երևանում կեանքը, որ ամբողջ մի ամիս գրեթէ գոյութիւն չունէր, այսօր դարձեալ իւր նախկին կենդանի ընթացքին է ստացել. նրանք, որոնք վաստբար թողել քաղաքը փախել էին, հետզհետէ վերադառնում են։

Գովելի և միանգամայն խրախուսանքի արժանի են երիտասարդ բժիշկ պ. Վարդանեանցի և ուսանող Զաւրիեվի ձեռնարկած օգտաւէտ գործը. այդ պարոնները իրանց մէջ կազմելով սանիտարական խումբ, շրջում են քաղաքի տները և իրանց հսկողութեան տակ ֆելդշէրների ձեռքով ախտահանել են տալիս վարակուած բնակարանները։

Ի դէպ. այն երիտասարդները, որոնց շնորհիւ Երևանում բացուեցան և կառավարվում էին երկու ձրի թէյատներ, այսօր զանազան պատրուակներով ցրուել գնացել են զանազան կողմեր, թողնելով ձեռնարկած գործը երեսի վրայ. ցանկալի էր որ այդ պարոնները իմանային, թէ մի սկսած գործ միայն այն ժամանակ է իւր իսկական նպատակին ծառայում, երբ նրան նոյն եռանդով, որպէս սկսել են, նաև վերջացնեն։

Սար. Օհանջանեանց։

***

ՍԱՐԻՂԱՄԻՇ, 25 օգոստ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Համաճարակ խոլերայի սարսափը բակզբից խիստ էր, բայց հետզհետէ թուլացաւ։ Սարիղամիշը մինչև այսօր ազատ է այդ համաճարակից. ազատ են նաև շրջակայ գիւղերը, բացի Կարս տանող խճուղու վրայ գտնուած Բէնդիւէհմէդ հայաբնակ գիւղը, ուր մի քանի դէպքեր են պատահել վերջին օրերում։ Այժմ մեզանում մի տեսակ հիւանդութիւն կայ, որ լուծում է և ոմանք էլ փսխում են, տեւում է երկու օր։ Այդ հիւանդութիւնը մինչև այսօր ոչ մի վնաս տուած չէ։ Կարծում են, որ այդ հիւանդութիւնը խոլերա է, բայց որովհետև տեղիս գիրքը ծովի մակերևոյթից 7500 ոտ բարձր է, Կոխի բացիլլները թէև կարող են գոյութիւն ունենալ, բայց մարդկանց վրայ անկարող են ներգործելու։ Կարսից փախած մշակներից երկու վարակուածները տեղս հասնելու պէս մեռան։ Տեղիս առողջապահական խումբը եռանդագին աշխատում է և պէտք է ասել Սարիղամիշը մաքրութեան կողմից բաւարար է։ Եթէ մնայինք տեղիս տանուտէրի յուսով, խոլերան լաւ հունձ կ'անէր, քանի որ դեռ Կարսում խոլերան նոր էր երևացել, մեր տանուտէրը իւր պլաների հետ գերդաստանով գնացել էր անտառը, բայց գաւառապետի խիստ հրամանը յետ բերեց, այժմ ամէնևին անհոգ իւր տանն է ընդունում Կարսից եկողներին առանց նախապէս ախտահանելու։ Պէտք է նկատել, որ տանուտէրը այլ և այլ գործերում խիստ ժիր է, մանաւանդ առանց անյագրի մարդկանց վերաբերութեամբ։

Մեզանում արգելուած է նոր մրգերի ծախելը, հէնց այդ պատճառով էլ չեն բերում։ Պէտք է անկեղծ սրտով շնորհակալ լինել պ. գաւառապետ Ղարախանեանցից և գործօն առողջապահական յանձնախմբից, որ կարելի միջոցներով սաստիկ հսկում է մաքրութեան մասին։

Այժմ, տանուտէրից ձեռք վեր առած, հասարակութիւնը ինքն է իւր համար մտածում և աշխատում, թէև տեղիս խաչագող թախումը միշտ խոչընդոտ է հանդիսանում. բայց գաւառի կառավարիչ պ. Ձահբաթեանի խիստ հրամանը նոցա էլ կարգի բերեց։ Նոքա մտածում են պարսիկների պէս. թէ ում ճակատին գրած է, կմեռնի, ուրեմն աւելորդ է այդ մասին ծախքեր անելու։

Մեր հասարակութիւնը արդէն համոզմունք է կազմել, որ մեր աւանի համար անընդունակ է ներկայ տանուտէրը. ուրեմն հարկաւոր է մի ժիր և ընդունակ անձն ընտրել, որ ճգնաժամի ժամանակ չթողնի հասարակական գործերը և անտառները գնայ։

Հօր-Հէր։

***

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԴ, 26 օգոստ.

(Թղթակցութիւն «Արձագանք»-ի)

Երկար ժամանակուայ բացակայութիւնից յետոյ այս ամառ այցելեցի հայրենի Նոր Բայազէդ քաղաքը, բայց չգտայ ժողովրդին իւր նախկին խաղաղ, ուրախ դրութեան մէջ։ Այժմեան համաճարակ հիւանդութիւնը ժողովրդին գցել էր յուսահատութեան և սարսափի մէջ։ Խոլերան—անկոչ հիւրը վերջապէս այցելեց և Նոր-Բայազէդ քաղաքը, Նոր բայազէդցիք գրկաբաց ընդունեցին, առանց նախօրօք պատրաստութիւն տեսնելու, առողջապահութեան մասին։ Ինտելլիգենցիան—եթէ կարելի է միայն անուանել—չէր մտածում, նախապատրաստող միջոցներ ձեռք առնել անկոչ հիւրի—խոլերայի առաջն առնելու համարը։ Փոխանակ մտածելու, —քանի որ մեծ թուով կոտորածներ չէին երևացել—հրաւիրել նոր բժիշկներ, ֆելդշէրներ, կազմել սանիտարական խմբեր, բանալ ձրի թէյատներ, մտածելու իրանց մաքրութեան և առողջապահօրէն ապրելու մասին, դեռ շատ առաջ վարձել էին հիւանդանոցի համար շինութիւն' ամսական 30 ռուբլով, իսկ իրանք ձեռքերը ծալած սպասում էին։

Չկային մինչև անգամ ախտահանող դեղեր, և ոչ մի բժշկական միջոց, որ կռուէր անկոչ հիւրի դէմ։ Սակայն հիւանդութեան տարածման ժամանակ օգնութեան հասան իրանց հայրենիքին մի խումբ երիտասարդներ — զանազան քաղաքներից գալով իրանց ծննդավայրը, որպէս ամարանոց, իսկոյն մտածեցին ձեռքից եկածը չխնայել օգնելու հայրենիքին։ Տասն և ութ հոգի ժողովուելով վճռեցին ամբողջ քաղաքը բաժանել 6 մասի և ամեն մի մասի վրայ 3 հոգի սանիտարներ նշանակեցին, և սկսեցին շրջել քաղաքի մէջ և ժողովրդին նախապատրաստել մաքրելու իրանց բակը, տունը, գոմերը, ստորագրութիւն բացեցին և քաղաքացիներից ժողովեցին մի փոքրիկ գումար հարկաւոր ծախքերն անելու համար, և այդպէս սկսեցին կռուել համաճարակման դէմ, միևնոյն ժամանակ առվորեցնելով, առողջապահօրէն ապրելու եղանակը, դեղերի գործածութեան ձևը. դուրս հանուեցին տասնեակ սայլեր, որոնք դէն էին անում տների և փողոցների աղբերը. կարելի է ասել, որ նախկին կեղտոտ Նոր-Բայազէդը մաքրութեան կողմից այժմ կմրցէ գաւառական շատ քաղաքների հետ։ Խոլերայի երևալուց փոքր առաջ տեղիս հարուստ բարերարներից Խաչ. Բունիաթեանցը բացեց ձրի թէյատուն, բաժանելով աղքատներին շաքար և թէյ. թէյատան կառավարելը յանձն առան նոյն սանիտարական խմբի անդամները հերթով։

Հիւանդութեան յայտնուելուց յետոյ հազիւ հազ Նոր-Բայազէդցիք խնդրեցին եկան և հրաւիրեցին Երևանից պ. բժ. Տէր Աւետիքեանցին, տասն օրով. իսկ կառավարութիւնը լսելով ժողովրդի անխնամ դրութիւնը բարեհաճեց էր Թիֆլիզի նահանգից ուղարկել է զինուորական բժիշկ պ. Լեվիցկին։

Երբ ժողովրդի մէջ հիւանդների թիւը օրէցօր շատանում էր' ժողովուրդը ինքն էր պահում հիւանդին, փախենալով հիւանդանոցից, ուր հիւանդներին խնամում էր փորձառու ֆելդշէր պ. Յ. Ղայֆաճեանցը։

Սանիտարական խմբի մի գովելի գործունէութիւնը նրանումն էր կայանում, որ նոքա այն հիւանդներին, որոնք միջոց չունէին տանը խնամելու, ստիպմամբ ուղարկում էին հիւանդանոց, իսկ տանը մնացածների համար բժիշկներ էին տանում։

Այստեղ ամսոյս 22-ին ստացուեց Թիֆլիզի Եարեգործ. Ընկ. ուղարկած դեղերը, և կիւրակի ամսոյս 23-ին տղայոց դպրոցում ընկ. ընդ. ժողով կայացաւ, որտեղ վճռեցին դեղերը երկու մասը բաժանել. մի մասը գաւառի համար, միւս մասը քաղաքիս աղքատ դասակարգին բաժանել։

Դեղերի բաժանելը յանձնուեց սանիտարական խմբին, որ յանձն առաւ բաժանել թէ գիւղերում և թէ քաղաքի աղքատներին։

Հ. Բ—ն—յ—ց։

***

«Մշակի» լրագիրը, որ պարծեցել է միշտ կլոսակիրթների շողոքորթելու սովորութեամբ, այս անգամ էլ մի ներբող է տպել պարոն Գ. Աղայեանցի մասին, որի մէջ յանդըգնելով նրան համեմատել Պ. Սիմէօնեանցի և Հ. Նահապետեանցի հետ, աւելացնում է, որ այդ մարդու գըլխում մի մեխ կայ ցցած (sic!)։ Մի յաւելուած միայն կ'անենք այդ ներբողի խօսքերին. մեխը միայն պ. Աղայեանցի գլխում չէ ցցուած, այլ ամեն անձանց գլխում, որոնք խնամական ձգտումներով պղծում են հրապարակագրութիւնը։

«Մշակի» № 98 կարդացողն այն տպաւորութիւն է ստանում, ինչ տպաւորութիւն անում էին Փարիզի ծո-ղ—ի թերթերը Բուլանժէի ցիրկից գնած ձին գովելով...

***

Լսում ենք, որ Ներսիսեան դըպրանոցի սաները, որոնք այս ամառը ուղարկուած էին գիւղօրեակն ճանապարհորդութիւն անելու, համաձայն հողաբարձութեան որոշման, մնալու են Դիլիջանում, որ նրանց հաստատուն բնակավայրն է, մինչև սեպտեմբերի 10-ը։

***

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

ԹԻՖԼԻԶԻ Միքայէլեան հիւանդանոց է բերուած օգոստոսի 27-ին, կասկածելի հիւանդութեամբ 9-րդ քաղաքամասից Վասիլիյ Կոնօվալով, 70 տարեկան։

Պարսից խոլերային հիւանդանոցում օգոստ. 27-ին կային 3 հիւանդ. մեռաւ 1. Ջափար-Մահմադ օղլի. բերուած էր 1-ին քաղաքամասից. դուրս գնաց 1, Մաշադի Աղրաֆ-Կուլի-օղլի, 33 տարեկան։

Թիֆլիզի գաւառում, Մուղանլու գիւղում մեռան 2 Սագարէջօ գիւղ. մեռաւ 2, Բորչալու գ. հիւանդացաւ 1. Բերտուբանի գիւղ. առողջացան 3 հոգի։

Ախալքալաքի գաւառի օգոստոսի 23-ին և 24-ին, գիւղերում հիւանդացան 98 մարդ. առողջացան 52, մեռան 47, մնում են 84։ Ախալքալաք հիւանդացան 4, մեռան 2, մնում են 2 հոգի։

Ախալցխայում օգոստոսի 23-ին հիւանդներ կային 32, օգոստ. 23-ին և 24-ին հիւանդացան 37, մեռան 12, առողջացան 5, մնում են 52 հոգի։ Տամանեան գնդի մէջ հիւանդներ կային 30, հիւանդացան 13, մեռան 4, մնում են 39 հոգի։

Սղնախի գաւառում, կային 4. մեռաւ 1, և մնում են 3.

ԲԱԳՈՒԻ զինուորական հիւանդանոցում օգոստոսի 26-ին կային 7, նահանգում հիւանդացան 22, մեռան 10 առողջացաւ 1, մնում են 23 հ.։

ԳԱՆՁԱԿԻ նահանգում հիւանդացան 21, առողջացան 3, մեռան 5, մնում են 85 հոգի։

ՔՈՒԹԱՅԻՍԻ նահանգում հիւանդացան 4, առողջացան 4, մնում են 30 հոգի։

ԵՐԵՒԱՆՈՒՄ օգոստոսի 25-ին հիւանդացան 3, մեռան 2, առողջացան 9, մնում են 31. Նահանգում հիւանդացան 33, մեռան 20, առողջացան 195, մնում են 508 հոգի։

ՇՈՒՐԱՅՈՒՄ օգոստոսի 26-ին խոլերայով հիւանդների մէջ փոփոխութիւն չէ եղել. մնում են 3, շրջանում հիւանդացան 75, մեռան 34, առողջացան 86, մնում են 521 հ.։

ԿԱՐՍՈՒՄ հիւանդացան 10, առողջացան 13, մեռան 4, մնում են 82, շրջանում հիւանդացան 64, առողջացան 47, մեռան 13 հոգի։

ՍՏԱՎՐՈՊՈԼՈՒՄ հիւանդացան 15, մեռան 5, առողջացաւ 1, նահանգում հիւանդացան 615, մեռան 262, առողջացան 428 հոգի։

ԶԱՔԱԹԱԼԻ շրջանում հիւանդացան 8, առողջացան 8, մեռան 2, մնում են 40 հոգի։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒԻԼԻԱՄ ԳԼԱԴՍՏՕՆ

ՆՈՐԱ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ *)

III

ԳԼԱԴՍՏՕՆԸ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

1832 թիւը' Գլադստոնի համալսարանից դուրս գալու տարին' անգլիական պատմութեան մէջ մի նոր դարագլուխ է։ Բրիտանական ազնուապետութեան դարաւոր տիրապետութիւնը' նոյն դասի երեք բացառական արտօնութիւնների վրայ էր հիմնուած, որոնք են' 1) անգլիական եկեղեցու ազատութիւնը, որ մինչև 1829 թ. միակ հաստատութիւնն էր որ քաղաքական իրաւունքներ էր բաշխում. 2) կալուածատէրերի ընտրողական իրաւունքները, մինչև այդ ժամանակ բոլոր ձայները կալուածատէրերի ձեռքն էր կենդրոնանում, և 3) ժառանգական հողատիրութեան արտօնութիւնը, որի հետևանքն այն էր որ Անգլիայում հացահատիկի գինը բարձր էր, աղքատ, հասարակ տարրը ստիպուած էր կալուածատէրերի և հոգևորականութեան շնորհած «ողորմութեամբ» ապրելու։

1832 թ. բարեփոխումը այդ մենաշնորհութեանց երկրորդն սկըզբունքով ոչնչացրեց։ Թէպէտ գործնականապէս ընտրական իրաւունքն ընդարձակելով միայն 400,000 նոր ընտրողներ աւելացան, բայց և այնպէս միւս դասակարգերին տաճկական ազնուականութեան հետ հաւասար քաղաքական իրաւունքներ տալու առաջին քայլն արած էր և ապագայում պէտք էր միայն ընդարձակել այդ իրաւունքները։

Այդ նոր կարգադրութիւնն ազգի մեծամասնութեանը մեծ ուրախութիւն պատճառեց և փայլուն յոյսեր ներշնչեց, իսկ միւս մասը—խոքրամասնութիւնը' ատելութեամբ և սարսափելով էր նայում այդ կարգադրութեան վրայ։

Ահա թէ ինչպիսի հանգամանքներում, «գրպանի ընտրողական շրջան» կոչուածներից մէկը, այսինքն մի շրջան ուր տեղական մագնատի գըրպանում—ձեռքումն էր ընտրուելու բաղդը, առաջարկեց Գլադստոնին պարլամէնտական թեկնածու լինել։ Մինչև բարեփոխումը այդպիսի բազմաթիւ շրջաններ կային, բայց նոր օրէնքը դոցա մեծ մասը ոչնչացրեց. Նիւ-Եօրքն էլ, որ այդ միջոցներում անպայման կերպով ենթարկվում էր Նիւքասըլեան դքսին, այդպիսի մի շրջան էր։ Դուքսը, իւր որդու սքանչացած վկայութիւններին հաւատալով ընտրեց երիտասարդ Գլադստոնին։ Գլադստոնն ընդունելով նրա առաջարկութիւնը փութաց իտալիայից Նիւ-Եօրք վերադառնալու և ռէակցիայի շահերը պաշտպանել։ Այն ժամանակ նա հազիւ 22 տարեկան երիտասարդ էր, առողջ, գեղադէմ, փայլուն ընդունակութիւններով, ճարտարախօս և 'ի լրումն այդ բոլորի—նիւթական հարստութեան տէր։ Դըժուար թէ կարելի լինէր աւելի յաջող ընտրութիւն անել։

Իւր ընտրողներին գրած դիմումների մէջ նա յայտնում էր, թէ ինքը ոչ մի կուսակցութիւնից կախումն չունեցող թեկնածու է։

Այժմ նրա' պարլամէնտի մէջ ունեցած դիրքը որոշ էր—նա պատկանում էր աջ «կողմեաններին»։ Եւ ահա թէ ինչպիսի էին նրա առաջին օրէնսդրական փորձերը։

Երկու հերթական խնդիրներ կային. - Գաղթավայրերում եղած ստրկութիւնը և Իռլանդիան անդորրացնելը։ Առաջին հարցի մասին խօսելիս' նա կրկնում է թէ պէտք է ստրկատէրերին վարձատրել' նոցա «ազնուութեամբ և օրինաւոր ճանապարհով ձեռք բերած սեփականութիւնից» (ստրուկներից) զրկելու համար։ Իսկ Իռլանդիան խաղաղացնելու համար մտածում էին habeas corpus—անձնական անձեռնմխելիութիւն կոչուած օրէնքը վերցնել։ Միւս կողմից մտածում էին Իռլանդիայի մէջ անգլիական եկեղեցու իրաւունքները սահմանափակել *)։ Այս հարցին նա չէր համաձայնում, ընհակառակը, փոքր ժամանակից յետոյ մի տեսութեամբ ապացուցանում էր, թէ տիրապետող եկեղեցին անձեռնմխելի է, այն ինչ վիճաբանութեան ժամանակ ասաց, թէ «Թէպէտև Իռլանդիայում բողոքական առաջնորդների թիւը փոքր ինչ անհամեմատ է բողոքականների

*) Տես «Արձագանք» № 98.

*) Իռլանդիայում թէպէտև ազգաբնակութեան միայն 1/10 մասն էին բողոքական, բայց բոլոր ազգաբնակութիւնն էլ պարտաւորուած էր հոգալ բողոքական հոգևորականութեան ու եկեղեցու պէտքերը։

ԴԱՍԱԳՐՔԵՐ ՅՕՐԻՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մէկ քանի օր առաջ առիթ ունեցայ ներկայ գտնուելու մայրաքաղաքիս ամենանշանաւոր թաղերէն մէկուն վարժարանին հարցաքննութեանց, սակայն առոնցմէ ստացած տպաւորութեանցս նըկարագիրը չէ որ այսօր պիտի անեմ, որովհետև բաւական նիւթեր չկարողացայ քաղել մի ամբողջական և անսխալ գաղափար կազմելու համար։ Եւ այդ շատ դժուար է, որովհետև հանդիսականի հարցերուն թէ այս կամ այն առարկան քանի տարի է աւանդուած, համարեա շարունակ կը պատասխանեն դասատուները. «Ես չգիտեմ, որովհետև միայն մի տարի կամ այսքան ամիս է որ դաս կուտամ ասոնց»։ Ուրեմն թէ՛ ծրագրի և թէ գործունէութեան յարատևութեան բացակայութիւն. և ինչ կարելի էր սպասել նոյն իսկ աշխատասէր ուսուցիչներէ' բացի հատուկտոր լիճերէ ու փափաքներէ, պատահական ճիգերէ ու ջանքերէ։

Այն ուսուցչական խմբին մեծամասնութիւնը, որ ներկայ էր իբրև դասատու կամ հանդիսական, պատահմամբ և բարեբաղդաբար այն ուսուցիչներէն էր, որոնք դասագրքեր յօրինելով ուզած են առաջնորդել ուրիշները։ Կային առանց մէջ նաև այնպիսիներ, որոնց հետ թէև անծանօթ, սակայն դասագրքերու մասին թղթակցութիւններ էինք ունեցած։ Ուրեմն սպասելի էր, որ մեր մէջ մի վերին աստիճանի հետաքրքրական ու տաք խօսակցութիւն բացուէր։

Եւ ահա ես մտածեցի, յուսալով որ ուրիշներուն ես կարող էին այն տեղ արտայայտուած մտքերը հետաքրքրել, նորանց եզրակացութիւնները հրատարակել։

Նախ և առաջ քանի որ տակաւին որոշ և մանրամասն ծրագիրներ ունենալու բաղդը չունինք և ով գիտէ թէ երբ պիտի ունենանք, պէտք է որ օրինակի համար ընթերցարաններ կազմողները միանան և փոխանակ բազմաթիւ համանման գրքեր հրատարակելով' միմեանց վնասելու, այդ աշխատութիւնը սիմեանց մէջ բաժնեն 6—7 աստիճաններ որոշելով։

Այսքան աստիճան բաւ է, որովհետև աշխարհաբարի ընթերցման համար աւելի ոչ ժամանակ և ոչ պէտք կայ։ Աւելի բարձր դպրոցներու մէջ արդէն գրաբարը կը սկսի աշխարհաբար շարադրութեան հետ, որ ապա կարող է գրաբարի ձև ընդունիլ, եթէ ծրագիրն աւելի ընդարձակ է։ Մինչդեռ հիմա հրապարակը ողողուած է միայն առաջին աստիճաններուն վերաբերեալ բազմանուն ընթերցարաններով, որոնք սակայն իրենց բովանդակութիւնով քիչ կը տարբերուին միմեանցէ. իսկ միջակ դասարաններու համար յօրինուած են միայն հատուկտոր դասագրքեր, որոնց բովանդակութիւնը, ինչպէս և առաջիններունը, մեծ մասով հնցած պէտք է համարել։ Մենք արդէն ձեռք ենք առած այս խնդիրը և արևմտեան հայերու հին ու նոր ընթերցարաններն, առ այժմ թուով 24, քննադատած լինելով, սկսելու ենք արևելեան հայերունը և ցոյց տալու թէ ինչպէս Մանդինեանց, Բահաթրեանց, Աղայեանց, Նազարեանց, ուղիղ ճանապարհը արդէն բաւական ժամանակ է գտած են և այդ ուղղութիւնով ընտիր ընթերցարաններ են կազմած։

Այս համեմատական քննադատութիւնը, մեր առաջարկելի նիւթերու ցուցակի և ընթերցարանների ընդհանուր և տոհմային համառօտ պատմութեան հետ, յոյս ունինք այս տարի մեր նոր «Մանկավարժական գրադարան» կիսամեայ հանդէսի մէջ հրատարակելու, որի առաջին համարը յոյս ունիմ երկու օրս ստանալու և հետաքրքիր ընթերցողներուն ներկայացնելու։

Առաջարկելով ընթերցարան յօրինողներուն միանալ, չեմ տարակուսիր բնաւ թէ, եթէ այդ 6—7 անձերուն մնար գործը, նա մրցում է զերծ մնալով' աւելի պիտի յետադիմեր. ոչ, առանց չի մնար, որովհետև այդ ուժեղ միութիւնը աւելի զօրաւոր մրցում պիտի առաջացնէ, նորանոր խմբեր կազմակերպելու թէ Պոլսի և թէ այլ քաղաքներու մէջ, ինչպէս այդ կը պատահի քաղաքակըրթուած երկիրներու գրական ասպարէզին մէջ։ Գործին այսպիսի կանոնաւոր կազմակերպութիւն տալու համար, ի հարկէ, անհրաժեշտ է միութեան անդամներուն' ընթերցարանի նիւթեր քաղելու համար' որոշ մանկավարժական սկզբունքներ, որոց մասին մենք կ'արտայայտենք այն տեսակէտները, որոնց կը հետևինք։ Առ այժմ այսքանս գիտենք, որ ժամանակ է արդէն ձեռք վերցնել անթիւ ու անհամար խրատներէ, որոնք հետզհետէ տաղտկացնելով խեղճ մանուկները, անոնց մէջ փոխանակ սիրոյ և հարցասիրութեան' միայն զզուանք ու կեղծաւորութիւն կարող էին առաջացնել, մանաւանդ երբ «փոքրիկ բարոյագէտը» շարունակ իւր և ուրիշներու գլխուն քարոզ կը կարդայ, թէ «ես սա պէս պիտի ըլլամ, սա պէս պիտի վարուիմ»։ Ժամանակ է երես դարձնել այդ շինծու և մեծ մասամբ թարգմանական յօդուածներէ, որոնք օտարի' Մաքսը' Մարկոսի, Ժանը' Յովհաննէսի, Նաումը' Նահապետի ևայլն ևայլն փոխելով, միշտ օտար մնացին հայ մանկան սրտին ու հոգուն և միշտ պիտի մնան։ Տեսէք, Սաղմոս ու Ժամագրքէն յետոյ մենք նորան տուինք աշխարհաբար գրքեր, որ բան հասկնայ, մինչդեռ համարեա կէս դար այնպիսի վերացական նիւթերով լեցուցինք խեղճին գլուխը, այնքան բանագրօսիկ «Բարոյապատում»ներ կարդալ տուինք, որ նոր սերունդները նախկին նահապետական պարզութիւնը թողնելով' աւելի կեղծաւոր դառան։

Այս դարուս վերջերը ընթերցարանի խնդիրը պետական առաջնակարգ խնդիրներու կարգը կ'անցնի, գերմանական Բայսիթակը նորա բովանդակութեան ուսումնասիրութիւնը իւր օրակարգերի մէջ կը մտցնէ։ Որոնք են մանաւանդ մանկավարժական խնդիրների մէջ այս յառաջընթաց երկրի ժամանակակից եզրակացութիւնները։ Առ այժմ այսպէս ամփոփենք այդ տեսակէտները. Ա. Առաջին տարին, երբ մանկան մէջ գերակշռողը երևակայութիւնն է, զայն պէտք է առասպելաբանութիւններով և դիւցազներգութիւնով զբաղեցնել, ասոր հետ ընտանի աշխարհի և ծննդավայրի նկարագիրը միացնելով. Բ. Միջին դասարանները ազգային անցեալ ու ներկայ կեանքի և բնակավայրի պարզ և բանաստեղծական նկարագիրներով, իսկ Գ. Բարձրագոյն դասարանները, որոնք կըզբաղին ընդհանուր պատմութիւնով և աշխարհագրութիւնով, այս երևոյթներին վերաբերեալ ընտիր յօդուածներն ու ոտանաւորներն են, որոնք պիտի լրացնեն, պարզեն ու աւելի գրաւիչ ընեն աշակերտներուն աւանդելի ուսմունքները։

Ահա մի քանի խօսքով այդ սկըզբունքները։ Արդ' կ'ուզեմ նաև արևմտեան հայերու ընթերցարան կազմողները այս սկզբունքները ուսումնասիրելու հետևիլ անոնց, պիտի կարողանան դիմանալ մրցումանը. իսկ եթէ ոչ, այլ ևս տարիներ չեն անցնելու, երբ խիստ և անաչառ քըննադատութիւնը հրապարակ հանելով արեւելեան հայերու դասագրքերը' անոնք փոխադրել պիտի տայ, ինչպէս իր ժամանակին Տէր-Ղևոնդեանի «Մայրենի Լեզու» ները *) (արդէն նոյնպէս հնացած) և այժմ Սահակ քահանայ Սահակեանի «Հին ու Նոր Ուխտ»ի դասագրքերը մեծ հարուած տուին հրապարակի վերայ եղածներուն։

Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ.

(Հայր.)

*) Վերջին ժամանակներս ինչպէս «Մայրենի Լեզու»-ները' նոյնպէս և պ. Ամուրեանի «Գեղեւիք Պարտէզ»-ը, Վրոյրի «Ոսկեմատենիկը», Ս. Գաբամաճեանի «Հաւաքածոյք»ն և աւելի վաղ կարծեմ (թուականը ճիշդ չեմ յիշեր, ձեռքիս տակ ընթերցարանները չունենալով) Սըրուանձտեանի ընթերցարանները մասամբ մօտեցած են վերոյիշեալ աղբիւրներուն։

թուն, բայց նա հաւատացած է, որ Իռլանդիայում բողոքական եկեղեցին շուտով կվերակենդանանայ և բոլոր եպիսկոպոսներն էլ բաւականաչափ գործ կ'ունենան։

Իւր առաջին ճառով Գլադստոնը պարլամենտի վրայ շատ հաճելի տպաւորութիւն գործեց։ Երիտասարդ ճառասանին լողները շատ յաճախ չէին համաձայնում նորա փաստերին, բայց և հերքել չէին կարողանում։ Նորա ականջայտնի ձիրքը, աշխարհայ անկեղծութիւնը, պարզութիւնը, հակառակորդի վերաբերմամբ արդարացի լինելը, բարեխղճութիւնը — այդ բոլոր բարեմասնութիւնները մինչև ցայսօր էլ անբաժան են նորանից։

Այն ինչ թէ պարլամենտը և թէ ազգը այնքան դժգոհ էին վիգեան նախարարութիւնից, որ վերջապէս Գրէյի կաբինետն ստիպուած էր հրաժարական տալու։ Նոր վարչական մարմին կազմակերպելու գործը յանձնեցին Ռոբ. Պիլին, որ յայտնի էր որպէս չափաւոր պահպանողական և լաւ վարչական անձն։ Սա վաղուց նկատել էր երիտասարդ ճառասացի ընդունակութիւնները, ուստի և կաբինետը կազմակերպելիս՝ առաջարկեց Գլադստոնին ևեւմտից նախարարի օգնականի պաշտօնը։

(Կշարունակուի)։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Ֆիլիպոպոլ քաղաքում տեղի ունեցաւ արդիւնաբերական ցուցահանդէսի բացումը։ Բուլղարիայի այս առաջին ցուցահանդէսը ընդհանուրի ուշադրութիւնն է գրաւում։ Ցուցահանդէսը բացեց իշխ. Ֆերդինանդը մի ճառով, որով նա մատնացոյց էր անում արդիւնաբերական ձեռնարկութեանց բարգաւաճման անհրաժեշտութեան վրայ։

—

ԳԵՐՄԱՆԻԱ.—Վիլհելմ Բ. կայսրը Գերմանիայում խոլերայի ճարակելու պատճառով թողել է իւր Շվեդիա ուղևորուելու մտադրութիւնը։ Կայսրը չէ կամենում իւր հայրենիքից վտանգի ժամանակ բացակայ գտնուել։

Համաճարակն արագ կերպով տարածվում է Գերմանիայում։ Սէտի տարածումն ամենից մեծ ծաւալ ընտացաւ Համբուրգում, ուր 3000 հիւանդացողներից 1500 հոգի մեռել են, սկսած ախտի ճարակման օրուանից։

—

ԱՆԳԼԻԱ.—Անգլիական նորակազմ նախարարութիւնը հազիւ թէ կառավարութեան ղեկը ձեռք է առել, և ահա բարդանում են քաղաքական յարաբերութիւնները։

Աւղանստանի ապստամբութեան խնդիրն այժմ եւրոպական թերթերի առանձին ուշադրութիւնն են գրաւել։ Ամենքը լարուած սպասում են, թէ արդեօք Անգլիան օգնութեան ձեռք կկարկառէ՞ իւր դաշնակից պետութեան թէ ոչ. երկու դիպուածումն էլ ծանր է կառավարութեան բռնելիք ընթացքը։ Եթէ անգլիացիք զլանան էմիրին նրա խնդրած օգնութիւնը, այն ժամանակ Ռուսաստանի գիրկը կ'ընկնի նա, իսկ եթէ օգնութիւն հասցնեն, պատերազմի վտանգն աւելի կ'աճի։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

Օգոստոսի 27-ից.

ՎԻԵՆՆԱ, — «Fremdenblatt»-ն ասում է, որ Պամիրի բարձրաւանդակը շատ փոքր կտոր է նրա համար, որ երեք հզօր պետութիւնների մէջ կռուածաղիկ լինի։

ՓԱՐԻԶ.—Սէնայի դեպարտամենտի ատեանը ծովային մինիստրութեան պաշտօնեայ Գրէյներին, որ Միացեալ-Նահանգների զինուորական գործակալին վկայականներ էր վաճառել, 20 տարով տաժանակիր աշխատանքի դատապարտեց։

ԼՈՆԴՈՆ.—Բէյտերի գործակալութեանը հաղորդում են, որ բրիտանական կառավարութեան կողմից Կաշիրէից հետևակ զօրագունդը յետ կոչելու մասին ոչինչ կարգադրութիւն չի եղել, նոյն իսկ ոչինչ պատճառ չկայ ենթադրելու, որ բրիտանական քաղաքականութեան մէջ Եգիպտոսի վերաբերեալ մի որևիցէ փոփոխութիւն առաջ եկած լինի կամ Եգիպտոսից անգլիական զօրքը հեռացնելու մասին հարցը մինիստրական ժողովի ուշադրութիւնը իւր վրայ դարձրած լինի։

ՆԻՒ-ԵՈՐՔ. — Խօլերայով հիւանդանալու 8 դէպք է եղել և մի դէպք էլ մահուան։

ՇԱՆՀԱՅ.—Սեպտեմբերի 6-ին (ն. տ.) Սինգանից հեռագիրը հաղորդում է, որ Ջենսում խողխողուած են ռուսաց միսիոները և տեղացի մի քանի քրիստոնեաներ։

ՓԱՐԻԶ.—Երէկ երեկոյեան բորսային շինութեան մէջ ոստիկանական տան առաջ Colonnes փողոցում պայթում առաջացաւ. յետոյ մայթի վրայ գտել են պղնձեայ խողովակի կտոր 15 սանտիմետր երկարութեամբ, որ փաթաթած էր երկաթեայ լարի մէջ։ Այդ խողովակը կըհետազօտուի։ Պայթումից վնաս չէ եղել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պետական բանկի գանձարանի միջոցները հարստացնելու համար յայտարարուած է 25 միլիօն ռուբլու խսկական գումար դուրս թողնել, նոյն քանակութեամբ ոսկու ապահովութեամբ։ Ճանապարհների հաղորդակցութեան նախարարի կառավարիչը, շրջաբերականով ցոյց տալով նաւագնացութիւններից մտնող գումարների խիստ զանազանութիւնը բեռների քանակութեան հետ, յայտնում է, որ այդ փաստն ակներև ցոյց է տալիս, թէ սահմանապահները վերին աստիճանի անհոգութեամբ են ստանում բեռան տէրերի ցուցմունքները։ Բացի դրանից, նախարարի կառավարչին են հասնում բազմաթիւ հիմնաւոր յայտարարութիւններ, որ որ շատ գիւղուածներում սահմանապահները, ապրանքատէրերի դէպի սխտական գանձարանը ի վնաս գործ դրած ընթացքը քաջալերելով, դրանից իրանք ևս օգտվում են, այդ պատճառով շրջանների կառավարիչներին առաջարկվում է. 1) ամենայն ձեռ. տեղեկութիւններ հաւաքել ծովային ճանապարհներով եկող ապրանքների տեղացի գների մասին և դրանց հիման վրայ կազմել ապրանքների տեղեկագիր՝ ցոյց տալով վերջնական գները. 2) մինչև նաւագնացութեան սկիզբը տեղեկագիրը յայտնել սահմանապահներին, ստուգիչ ատեաներին և դեպարտամէնտին. 3) յայտարարածն խիստ կատարել. 4) անընդհատ հետևել սահմանապահների գործունէութեանը։

Լոյս է տեսել «Современное лѣченіе холеры» գիրքը, որ կազմել է բժշկապետ Կօբլինը օգտուելով իտալական պրօֆեսօր Կոնտանի և Պերլի աշխատանքներից։

ԲԵՐԼԻՆ.—Բերլինի քաղաքապետը դիմել է ներքին գործերի նախարարին, որ թոյլ տայ խօլերայի եղած դէպքում այրել դիակները։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

(Օգոստոսի 28-ին)

	Ռ.	Կ.
Լոնդոն 10 ֆունտ. արժէ . .	98	90
Բերլին 100 մարկը — . . .	48	42½
Փարիզ 100 ֆրանկը — . . .	39	20
Ոսկին — — — արժէ . .	7	89
Մաքսային կտրոններ — . .	158	—
Արծաթ — — — . .	1	10
Բորսային զեղչ — — 4%	5½	—%
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	103	37
— — — 2-րդ — —	103	—
— — — 3-րդ — —	»	»
— — — 4-րդ — —	»	»
— — — 5-րդ — —	»	»
— — — 6-րդ — —	103	12
6% ոսկեայ ռէնտա	160	50
4% ոսկեայ փոխառութիւն . .	—	—
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	—
— — — 2-րդ —	102	87
— — — 3-րդ —	104	12
Ներքին 5% առաջին փոխառ.	236	50
— — երկրորդ —	221	—
Պետական. երկաթուղային ռէնտա	103	75
5½ ռէնտա	—	—
4% ներքին փոխառութեան. .	94	75
5% գրաւ. թղթ. Ազն. կալ. բանկի.	101	87
Արք. Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. . .	193	—
Պետերբուրգի քաղաքային փոխ. ընկերութ. պարտատոմսեր	101	75
Մոսկուայի քաղ. վարկի պարտատոմսեր — —	101	25
Օդեսայի — —	101	75
Թիֆլիսի — — —	98	12
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկ.	99	87
— — Քութայիսի	99	87

Բորսայի տրամադրութիւնը խաղաղ է։

ԶԱՆԱԶԱՆ

ՀԻՆ ԴԵՐԱՍԱՆ, ՆՈՐ ԽՈՒՄԲ

Մնակեան և Ալիքսանեան խումբերուն մրցման միջև, ահա նոր անուն մը՝ կը լսուի, — կամ լաւ ևս հին անուն մը՝ նոր խումբի մը ի գլուխ։ Ֆասուլեաճեան Էֆէնտի, որ քառորդ դարէ հետէ բեմին ծառայած է և արուեստագէտի այնքան լաւ համբաւ մը ունի իր ետև, կըզգայ յանկարծ թէ դերասանի արիւնը կ'եռայ տակաւին իր երակներուն մէջ։ Խումբ մը կըկազմէ հինգ դերասանուհիներով և քանի չափ դերասաններով, նորերը կը վարժեցունէ, հիները կը քաջալերէ ու ներկայման կը ձեռնարկէ։ Այս գիշեր տեղի պիտի ունենայ այդ ներկայացում, զոր յայտագիրը «հազուագիւտ» կ'անուանէ։ Ընդքան ատենէ ի վեր Ֆասուլեաճեան Էֆէնտիի ներկայացումը չէ տեսնուած ի Կ. Պոլիս, մանաւանդ ի Բերա, որ իրաւ հազուագիւտ բան մըն է թատերասէրներուն, մանաւանդ այդ ճարտար դերասանին վաղեմի հասարակութեան հաւար երթալ տեսնել զինքը։ Խաղը, թէպէտ հին, մին է այն անմահելի թատերգութիւններէն, որք 10—20 տարիէ վեր կըներկայացուին մեր բեմերուն վրայ ու դարձեալ շահեկանութիւն ազդելու զօրութիւն ունեցած են «Բարիզու հնավաճառը», 5 արարուածով, 4 պատկերով և մէկ յառաջաբանով։ Հայր Ժանոյի դերը պիտի կատարէ Ֆասուլեաճեան։ Դերասանուհիներն են՝ Տիկնայք. Ֆասուլեաճեան, Ալերճիկ, Սոֆի և Օրիորդք Քնար և Աննա։ Վերջին չորսը նոր անուններ, դէթ մեզ համար։

Բայց թատրոնը՞... քիչ մնաց պիտի մոռանայինք — Դուշակութեամբ չի գտնուիր։ Ֆասուլեաճեան ճշմարիտ գիւտ մը ըրած է բեմ մը ճարելու համար։ Ռուսեայի թատրոնը երեք խումբերու միանգամայն կը ծառայէ (Ալիքսանեան, Մնակեան և Ապտի Էֆէնտի), Թէփէ-Պաշըն ու Ֆօնքօրիան Ֆրանսիական ու իտալական խումբերու մենաշնորհն են, և ձմեռնային թատրոնները գոց։ Եւ ահա ներշնչում մը կ'ունենայ մեր վաղեմի դերասանը, Թագսիմի հանրային պարտէզին անկիւնը երթալ գտնելով ամառնային կոկիկ թատրոն մը, որ վաղուց լքուած է. լաւ կարելոյն կը կազմակերպէ զայն ու խումբին հետ կը հաստատուի հոն։ Դերասան ու թատերաբեմ, երկուքն ալ մոռացուած, պիտի վերակենդանանան ուրեմն այս գիշեր, եթէ միայն հասարակութիւնը, կամ գէթ Բերայեցւոց մէկ մասն ուզէ։ Մասնաւորապէս Հայոց համար՝ գրօսանք է աւելի մարդասիրական բան մըն է իր քաջալերութիւնը չի պակսիլ այս գիշերուան համար։ Վերջապէս կարելի չէ՞ փոքրիկ բացառութիւն մը ընել, միակ գիշեր մը զրկուելով Ֆրանսիական ու իտալական թատրոններու հրապոյրներէն, գէթ ի նպաստ Ֆասուլեաճեանին, եթէ ոչ ի քաջալեր իր շուրջը խռնող նորերուն։ Աւելի չենք ուզեր ըսել, զի յայտագիրն՝ իր պարզութեան մէջ՝ լրագրական որ և է հրաւէրէ աւելի ազդեցիկ է։ Ահա ատիկ.

«25 տարիներէ ի վեր թատերաբեմերու վրայ աշխատող հին դերասան մը, «Բերայի ազնիւ հասարակութենէն՝ որ «իր խանձարուրն եղած է՝ կըսպասէ իր «արժանի հատուցումը որ է քաջալերու-«թիւն իր առաջին ձեռնարկին մէջ։ «Շնորհ մը որ իրեանից վեհանձնութենէն «կախում ունի»։

Եթէ Ֆասուլեաճեանի այս որոշայոյզ հրաւէրին ալ անտեղի մնայ... բայց չենք յուսար։ («Բիւզ.»)

Խմբագիր հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիզից Բաթում փոստային գնացքը դուրս է գալիս 6 ժ. 50 ր. երեկ.
Թիֆլիզից Բաթում ապրանք.-մարդատ. գն. դուրս է գ. 8 ժ. 30 ր. առաւ.
Բաթումից Թիֆլիզ փոստային գնացքը հասնում է 9 ժ. 52 ր. երեկ.
Բաթումից Թիֆլիզ ապրանք.-մարդ. գն. հասնում է 12 ժ. 25 ր. ցերեկ.
Թիֆլիզից Բագու փոստային գնացքը դուրս է գնում 1 ժ. 20 ր. ցերեկ.
Բագուից Թիֆլիզ փոստային գնացքը հասնում է 5 ժ. 50 ր. երեկ.
Թիֆլիզից Գանձակ խառն գնաց. դուրս է գնում 9 ժ. 20 ր. երեկ.
Գանձակից Թիֆլիզ խառն գնացքը հասնում է 7 ժ. 30 ր. առաւ.

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պոլսի միջեւ։

Բաթումից դուրս է գնում.

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի վրայով։
Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին (շաբաթ գիշերը լոյս կիրակի) շրջանառում ընթացքով Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները։
Երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 7-ին Կ. Պոլիս։

Բաթում հասնում է.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով։
Ուրբաթ օրերը, առաւօտեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով Կերչի և Նովօրոսիյսկի վրայով։
Կիրակի օրերը, առաւօտեան, Կ. Պոլսից։

—

Փոստային և ապրանքային-մարդատար շոգենաւերի երթեւեկութիւն Փոթիի, Բաթումի և Օդեսայի միջեւ։

Փոթի հասնում է.

Փոստային մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին։
Ապրանքային-մարդատար շոգենաւը Օդեսայից կիրակի օրերը երկոյեան։
Ապրանքային-մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին։

Փոթիից դուրս է գնում.

Փոստային-մարդատար շոգենաւը Օդեսա և ճանապարհին գտնուած նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին։
Փոստային մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում։
Ապրանքային-մարդատար շոգենաւը Բաթում երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին։
Ապրանքային-մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օդեսա և ճանապարհին գտնուած նաւահանգիստները։

—

Ապրանքատար-մարդատար գիծ.

Բաթումից դուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 1-ին։
Բաթում հասնում է երեքշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 2-ին։
Ապրանքակիր մարդատար շոգենաւի վերայ ընդունվում են II և III կարգի ուղևորներ և առանց ուտեստի։
Գործակալութիւնը գտնվում է Թիֆլիզի Ազ. Բանկի շինութեան մէջ №№ 117 և 118։

—

Փոստային կառքերի երթևեկութիւն վրաց պատերազմական ճանապարհի վրայ։

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորվում է կէս օրի յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու, հասնում է հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Վլադիկավկազից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորվում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու, հասնում է հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7-ին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչև սեպտեմբերի 5-ը լոյս կընծայուի
ԻՄ ԿԱԶՄԱԾ
ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ
Ա. Բ. Ե. Գ.
տարիների դասագրքերը հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար։
Սահակ քահ. Սահակեանց։
3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ
ԹՈՎՄԱՍ ՄԵԾՈՓԵՑՈՒ
ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ
ԳԻՆՆ Է 25 Կ.

Նոյն հեղինակի մօտ կան հրատարակութիւնները.— Ռ. Կ.
1) Հիւսուած բանից նախնի պատմագրաց հայոց Ա. և Գ. գիրք. (բ. սպառեալ). Վիէննա 1877. գինն է 2 50
2) Հայոց հեթանոսական կրօնը. Վաղարշապատ 1879. գին. — 50
3) Գրաբառի խոնարհումը. Թիֆլիս 1881. գինն է . . . . — 25
4) Գրաբառի հոլովումը. Թիֆլիս 1881. գինն է . . . . . — 15
5) Ծաղկաքաղ արձակ և չափածոյ բանից ի պէտս վարժարանաց, յերիս շրջանս. Թիֆլիս 1881 . . . . . . — —
6) Ծաղկաքաղ, առաջին շրջան (բ. տպագր.) 1884 . . . — —
7) Բառացուցակ առաջին ծաղկաքաղի համար. Թիֆ. 1885. — —
8) Ստեփաննոս Օրբէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկէն Էջմիածնի. Թիֆլիս 1885. գինն է. . . . . — 30
9) Հայոց վանքերը. Մոսկվ 1886. գինն է. . . . . . . — 50

—

Ա Ե Լ Ե Ւ
ՏԻԿԻՆ ՄԱՐԳԱՐՏԻ ([illegible] Կոստանեանցի)
Հետևեալ թարգմանութիւնները. — Ռ. Կ.
1) ՅՈՎՀ. ԳՈՒՏԵՆԲԵՐԳ, տպագրութեան հնարողը. գ. — 15
2) ԴՈԿՏ. ՋԵՆՆԵՐ, ծաղկահատութեան հնարողը. գինն է — 20
3) ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, Հայ երեխաների համար (15 թատերախաղ), փոխադրութիւն, գինն է . . . . . . 1 —
Վաճառվում են Կարապետ Կոստանեանցի մօտ Ալէքսանդրապոլում։
Ճանապարհածախսը գնողների վրայ է։
(73) (5—2)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՀԱՄԱԶԱՍՊ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Օ Ր Բ Է Լ Ի
Սօլօլակսկայա փողոց, սեպհական տունը №№ 14—16
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ { առաւօտները 12 — 2 ժամը. երեկոները 5 — 7 ժամը։ }
Իսկ կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 — 2 ժամը կէսօրից յետոյ։
(2) (150—91)

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ՀԱՅՈՑ
ԾԽԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
1) Եղանեան՝ Աղօթատետր հայոց եկեղեցական-ծխական և արքունի Ռ. Կ. ուսումնարանների համար . . . . — 10
2) » Կրօնի դասագիրք. երկրորդ տարի . . . . — 25
3) » » երրորդ տարի. . . . . — 25
4) Սահակեանց Ս. ք. Սրբազան պատմ. հին—Աւետ. . . . . . . — 40
5) Տէր-Ստեփանեան՝ Սկզբունք քր. հաւատոյ. . . . . — 60
6) Սիմոնեանց Պ.՝ Սրբազան պատմ. հ. կտակ. . . . . — 50
7) Կոստանեան՝ Նախաշաւիղ գրաբար. . . . . — 25
8) » Ծաղկաքաղ, շրջան Ա. գր. . . . . — 25
9) » Ծաղկաքաղ, շրջան Գ. գր. . . . . — 40
10) Եղիշէ ըստ Անձևացեաց օրինակի . . . . — 80
11) Ղուկասեանց Հ.՝ Քերականութիւն գրաբար լեզուի հայոց. . . . — 50
12) » Ընդհանուր պատմութիւն, հին դար . . . . . . — 80
13) Նազարեան՝ Հայոց լեզուի դասագիրք գ. տարի . . . . — 40
14) » » » դ. տարի . . . . — 60
15) » Ընտիր հատուածներ. 1 25
16) Ս. Մալխասեանց՝ Գրաբարի հոլով. խոնարհ. և նախդ. . . . . — 25
17) » Գրաբարի համաձայնութիւնը. . . . . . . — 50
18) Պ. Մանդինեան՝ Համառօտ մանկավարժութիւն 1 50
19) » Հենչելի բացատր. ուսուց. համար . . . . . — 30
20) Գ. Երզնկեանց՝ Թուաբ. խնդիրներ և օրինակներ տարրական դասընթացք ա. և բ. տարի. . . . . — 30
21) » գ. տարի. . . . . — 35
22) Վարձելեան՝ Դասագիրք թուաբանութեան . . . . — 70
23) Տէր-Սարգսեան՝ Վայելչ. գասաւանդ. եղանակը. . . . . — 20
24) Երզնկեան՝ Դասագիրք ձայնագրութեան . . . . — 60
25) Սիմէօնեան՝ Աշխարհագրութիւն, մ. բնակ. . . . . — 60
26) » » մ. քաղաքական . . . . . . — 60
27) Вересовъ, Рисованіе по сѣткѣ для самостоятельн. занятій дѣтей въ школѣ и дома . . . . — 15
Тоже полное изданіе . . . . — 25
28) Теръ-Давтянцъ, Рус. Сл. Рук. для Арм. уч. годъ I и II . — 50
29) Теръ-Акопіанцъ, Начальная книжка Русск. язык. для Армянскихъ училищъ, годъ I, II и III . . . . — 45
30) Его же, Учеб. Русск. языка для Армян. училищъ . . . . — 60
Գումարով գնողներին 20% զիջումն է լինում։
Ծրարի և ճանապարհածախսը գնողների վրայ է։
(72) (5—2)